600.0126.16.09.05

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2005 թվականի № 126Ն
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի № 1Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2003 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու մասին» № 1Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգի»

ա) «Փոխադրվող բնական գազի հաշվեկշիռը կանխատեսվող տարվա համար» № 4 հավելվածի 4-8 ձևը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն № 1 հավելվածի.

բ) «Բաշխվող բնական գազի հաշվեկշիռը կանխատեսվող տարվա համար» № 4 հավելվածի 4-9 ձևը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն № 2 հավելվածի.

գ) «Բնական գազի ներկրման ծառայության սակագնի հաշվարկ» № 5 հավելվածի 5-11 ձևը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն № 3 հավելվածի.

դ) «Բնական գազի փոխադրման ծառայության սակագնի հաշվարկ» № 5 հավելվածի 5-12 ձևը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն № 4 հավելվածի.

ե) «Բնական գազի բաշխման ծառայության սակագնի հաշվարկ» № 5 հավելվածի 5-13 ձևը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն № 5 հավելվածի.

զ) «Էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման և վերանայման համար լիցենզավորված անձի կողմից հանձնաժողով ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ» № 1 հավելվածի՝ 12 -րդ այունակում «Բնական գազի ներկրման գործունեություն իրականացնող ընկերություններ» բառերը փոխարինել «Գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայություն մատուցող ընկերություններ» բառերով, 22 -րդ կետում «Բնական գազի ներկրման ծառայության սակագնի հաշվարկ» բառերը փոխարինել «Գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագնի հաշվարկ» բառերով, 23 -րդ կետում «Բնական գազի փոխադրման ծառայության սակագնի հաշվարկ» բառերը փոխարինել «Գազամատակարարման համակարգի փոխադրման գործունեության սակագնի հաշվարկ» բառերով, 24 -րդ կետի անվանման «Բնական գազի բաշխման ծառայության սակագնի հաշվարկ» բառերը փոխարինել «Գազամատակարարման համակարգի բաշխման գործունեության սակագնի հաշվարկ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
16 սեպտեմբերի 2005թ.